№ 151 ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 13 1901 ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 13 № 151

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկոց.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աջակցութիւն ազգաբնակութեան կողմից.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բագուի նաւթարդիւնաբերութիւնը 1900 թ.ին. Նամակ Բալախանիից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ Թռուցիկ զրոյցներ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում։

ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Կ. Պօլսում ժանտախտի դէպքեր տեղի ունեցան։ Այդ հանգամանքը ստիպեց ձեռք առնել նախազգուշական միջոցներ և մեծ հսկողութեան ենթարկել Բոսֆորի ափերից եկող նաւերը և ճանապարհորդներին. նկատված է, որ նաւերի մէջ գտնվող մկները և առնէտները շատ անգամ ցամաք են դուրս գալիս և պատճառում ժանտախտի տարածման, ուստի կարգադրված է, որ առանձին ուշադրութեամբ հետևեն, որպէս զի շոգենաւների և ցամաքի մէջ գցած փայտեայ կամուրջներով չը տեղափոխվեն այդ կենդանիները։

Թէ Կովկասում և թէ հարաւային Ռուսաստանում տեղական վարչութիւնները հրահանգ են ստացել գործադրելու նախազգուշական միջոցներ և հսկելու, որ իսկոյն տեղեկագրվի հիւանդութիւնը, եթէ նա անցնելու լինի դէպի Ռուսաստանի սահմանները, որպէս զի կարելի լինի անմիջապէս կղզիացնել նրան և նրա տարածման առաջն առնել։

Թիֆլիսում ոստիկանապետը յատուկ հրահանգներ է տուել ոստիկանական պաշտօնեաներին, պատուիրելով նշանակել ամենալուրջ հսկողութիւն հիւանդութեան դէպքերի վրա և անմիջապէս զեկուցանել բոլոր կասկածելի դէպքերի մասին։

Ճիշդ է, մեր երկիրը դեռ ազատ է ժանտախտից, բայց նա կարող է յանկարծ երևալ և վտանգի ենթարկել երկիրը, եթէ միջոցներ չեն ձեռք առնվի խեղդելու և ոչնչացնելու նրան իր սաղմում։

Ինչպէս յայտնի է, ժանտախտը աւելի տարածվում է այն տեղերում, ուր գոյութիւն ունեն հակառողջապահական պայմաններ, և նա շուտով ոչնչանում է այնտեղ, ուր սանիտարական գործը կազմակերպված է բաւարար կերպով։ Եւրոպական մի քանի քաղաքներում, Գլասգոյում և Օպօրտոյում, ուր երևաց ժանտախտը, նա չը բռնկվեց իբրև հրդեհ և չը վարակեց շրջակայքը, շնորհիւ այն խիստ միջոցների, որոնք գործադրվեցին ժանտախտ երևեցած կէտերում։

Մաքառել այդ սոսկալի հիւանդութեան դէմ կարելի է, բայց կարևոր է, որ ազգաբնակութիւնը աջակցէ պետութեան և վարչութեան հալածելու նրան նպատակայարմար միջոցներով։ Ազգաբնակութեան միահամուռ աջակցութիւնը անհրաժեշտ է գործի աջողութեան համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ 1900 ԹԻՒՆ

III *)

Նաւթային արդիւնաբերութիւնը երեք բաժանմունքի կարելի է վերածել, այն է՝ նաւթ արդիւնաբերել, արդիւնաբերած նաւթը մշակել եւ արտահանել՝ գործածութեան համար։ Հէնց այդ տեսակէտից էլ նաւթային արդիւնաբերութեամբ պարապողները բաժանվում են. ոմանք ունեն նաւթահանք, պարապում են նաւթ արդիւնաբերելով, ոմանք նաւթահանք չունեն, նաւթ չեն արդիւնաբերում, բայց ունեն՝ կերոսին եւ տեսակ-տեսակ իւղեր պատրաստելու գործարաններ, որտեղ հում նաւթը փոփոխութեան է ենթարկվում, մշակվում եւ տեսակ-տեսակ արդիւնքների վերածվում. ոմանք էլ ոչ նաւթահանք ունեն, ոչ կերոսինի գործարան, այլ պարապում են այդ արդիւնքների արտահանութեամբ թէ Ռուսաստանի սահմանում եւ թէ այդ սահմանից դուրս։ Այսպէս է ներքին կազմակերպութեան մեծագոյն մասը, որը ունի չօշափելի անյարմարութիւններ։

Սակայն կան, թէեւ մի քանի հատ միայն, ֆիրմաներ, որոնք ամբողջ կազմակերպութիւն ունեն արդէն ստեղծած. նրանք ունեն եւ նաւթահանքեր, որոնցից նաւթ են ստանում, եւ գործարաններ, որտեղ մշակում են իրանց սեփական նաւթը, եւ արտահանութեան յարմարութիւններ, որոնց միջոցով արտահանում են ստացած նաւթային արդիւնքները։

Այսպիսով այն միջոցները, որոնք անհրաժեշտ պայմաններ են ներկայացնում արդիւնաբերած հում նաւթը մշակելու, գործածութեան համար պէտքական դարձնելու եւ գործածողներին մատակարարելու համար, չունեն բոլոր նաւթարդիւնաբերողները. սրանց մեծագոյն մասը ենթակայ դրութեան մէջ է եւ հետեւապէս կախված այս կամ այն հանգամանքից, մի խօսքով իր կատարեալ տէրը չէ։ Գլխաւոր ղեկավարութիւնը, գործի ընթացք տալը թեքվում է դէպի այն ֆիրմաները, որոնք ստեղծած ունեն վերոյիշեալ անհրաժեշտ պայմանները։ Եւ սա ահագին նշանակութիւն ունի եւ ծանրակշիռ դեր է կատարում նաւթային արդիւնաբերութեան ընդհանուր գործում։ Երեւակայեցէք, 1900 թ.ի ընթացքում ստացվել է 600 միլիոն պուդ նաւթ, որից մօտ 40 միլիոն Բագուից դուրս է տարված, 60 միլիոն մի երկրորդ կարգ, կազմելով երկրորդ յարկ, եւ սրա վրա նստել է չէնքի ամբողջ վերին բաժինը իր հսկայական ու գոյնզգոյն զանգուածով, ներկայացնելով մի վերին աստիճանի յանդուգն մտքի յղացումն։ Այս սիւներից վեր բարձրանում է մի կատարեալ արեւելեան պատ, որի սպիտակ եւ կարմիր քառակուսի մարմարներն այնպիսի արուեստով են խճողված իրար հետ, որ ստացվել է մի ահագին պարսկական կապերա իր շեղ քառակուսի ձեւերով։ Լուսամուտներն էլ այն աստիճան արեւելեան են, որ մարդ կարծում է, թէ իր առջեւ բարձրացողը մահմեդական աշխարհի մի պալատ է։

Լայնարձակ բակը, չորս կողմից պարփակված չէնքի չորս թեւերով, քառակուսի ձեւ ունի եւ արտաքին ճակատների պէս սիւնազարդ է։ Բակից դէպի գլխաւոր մուտքն է առաջնորդում Հսկաների մարմարեա սանդուխքը (scala dei giganti), որ այդպէս է կոչված իր երկու կողմերում բարձրացող Նեպտունի եւ Մարսի հսկայական արձանների պատճառով։ Այստեղից սիւնազարդ գալլերէան այցելուին առաջնորդում է դէպի ներսի դահլիճները։ Ամենահետաքրքիրը՝ մեծ խորհրդի դահլիճն է։ Այստեղ էին կատարվում նիստերը պետական այդ բարձրագոյն ժողովի, կազմված Վենետիկի բոլոր ազնվականներից, որոնց անունները գրված էին Ոսկէ գրքում։ Իւրաքանչիւր ազնվական, քսան տարեկան դառնալով, իրաւունք էր ստանում իր անունը քուէարկութեան ենթարկել այդ ժողովի անդամութեան համար (հաւատացնում են, որ քուէները ոսկէ եւ արծաթէ գնդակներ էին)։ Եթէ այդ հասակում նա քուէարկութեամբ չէր ընդունվում, այնուամենայնիւ նա իրաւունք ունէր քսանհինգ տարեկան եղած ժամանակ անդամ դառնալ առանց ընտրութեան։ Ահա այս ժառանգական ազնվականութիւնն էր, որ ամբողջ դարեր այստեղից օրէնքներ է թելադրել այնքան ժողովուրդների։

Խորհրդարանի ամբողջ հիւսիսային պատը ծածկված է մի հատ նկարով. դա Տինտէրետտոի 26 մետր երկարութեամբ եւ մօտ 8 լայնութեամբ «Արքայութիւնն» է, 1365 թ. գործ։ Այս զարմանալի նկարի վրա մօտ 600 մարմիններ շողում են ամպերի սպիտակութեան մէջ, սուրբերի եւ հրեշտակների ամբողջ գնդեր իրանց յաւիտենական ձանձրալի երջանկութեամբ նայում են դէպի վեր եւ կարծես իրանք էլ չը գիտեն, թէ ինչ անեն այս տարօրինակ երանութիւնը։ Նկարիչը հաւատում էր արդեօք յաւիտենական երանութեան այս տաղտուկ գաղափարին թէ ոչ, չը գիտեմ, յամենայն դէպս նա կարողացել է հզօր կերպով արտայայտել թէկուզ ամենանուիրական, ամենաանմեղ վայելքի հետ կապված անգործութեան բոլոր ձանձրոյթը։

Դահլիճի միւս պատերը ծածկված են Վենետիկի մղած պատերազմների զանազան տեսարաններով. գեղեցիկ է մանաւանդ առաստաղի նկարը, ուր Վենետիկը, մի փարթամ գեղեցկուհի, բազմել է գահի վրա ու փառքը պակում է նրա չքնաղ գլուխը. իր շուրջն են խաղաղութիւն, առատութիւն եւ շնորհ։ Առաստաղից անմիջապէս ներքեւ պատերի վրա չորս կողմում շարված են ժամանակագրական կարգով բոլոր դօժերի նկարները իրանց ճոխ զգեստներով։ Բոլոր նկարներից աւելի այցելուների ուշադրութիւնը գրաւողը այս դահլիճում դօժերի շարքի մէջ հարաւային անկիւնի մի սեւ կէտն է. այնտեղ են ուղղվում բոլոր հայեացքները, բոլոր դիտակները. այնտեղ մի սեւ ֆօնի վրա ներքեւից կարդացվում են սպիտակ տառերով հետեւեալ բառերը՝ «Hic est locus Marini Falieri decapitati pro criminibus».—«Ոճիրի համար գլխատված Մարինո Ֆալիէրօի տեղն է այս»։

Մարինո Ֆալիէրո դօժ էր 1353 թ.ին. հազիւ 7 ամիս էր անցել իր ընտրութիւնից, երբ նա, վրդովված մի ազնվական երիտասարդի անպատկառ վարմունքից դէպի իր երիտասարդ կինը, որոշեց ընդ միշտ տապալել ազնվականութիւնը եւ հաստատել Վենետիկում միապետական իշխանութիւն։ Բոլոր դժգոհ ռամկավարականները, ազնվականների բռնութեան դէմ բոլոր բողոքաւորները միացան նրա հետ եւ կազմեցին մի ընդարձակ դաւադրութիւն։ Երբ բոլոր պատրաստութիւնները տեսնված էին եւ մնում էր նշանը տալ, դաւադիրներից երկուսի ժանտութեամբ գաղտնիքը բացվեց. դօժը գահընկէց եղաւ եւ բանտարկվեց. անմիջապէս բռնվեցին նաեւ իր համախոհները. նրանց բոլորին էլ դատապարտեցին մահվան։ Դօժի ընկերներին կախեցին պալատի պատերից, իսկ իրան, 76 տարեկան ծերունուն, գլխատեցին գլխաւոր սանդուխքի բարձրութեան վրա, ուր սովորութիւն կար պակել նորընտիր դօժերին։ Իրանց իշխանութեան դէմ փորձ անող այս դօժի դէմ ազնվականների ատելութիւնն ու զայրոյթն այնքան մեծ էր, որ նրանց վրէժխնդրութիւնը հասաւ մինչեւ յանցագործի դերեզմանը. նրա դիակը թաղվեց գլուխն անարգաբար ոտների մէջ դրված։ Բոլոր նրա ստացուածքը պետութիւնը գրաւեց, իսկ պալատը տրվեց մասնիչներին ընծայ։ Տաս տարի յետոյ նրա նկարը ջնջեցին դօժերի շարքից եւ տեղը նկարեցին մի սեւ քող այն արձանագրութեամբ, որ կայ մինչեւ այսօր։ Մինչեւ իսկ նրա մահվան վճիռը չը գրվեց տասնի խորհրդի արձանագրութիւնների մատեանում. այդ վճռի տեղ կարդացվում են միայն հետեւեալ երկու բառը՝ «Non scribatur» («չի գրվելու»)։

Ասացի, որ ամենից աւելի այս սեւ քողն է ուշադրութիւն գրաւում դահլիճում։ Գլխատված դօժի թշնամիները այս սեւ քողով աւելի մեծ ծառայութիւն են մատուցել իրանց ատելի մարդուն. եւ ճշմարիտ, այն անօրինակ խստասրտութիւնը, որի հիմքը ոչ այնքան հասարակական շարժառիթներն են եղել, որքան դասակարգային չահերը, զայրացնում է մարդուս թւում է, թէ բռնակալների ամբողջ շարքի մէջ այդ սեւ քողը ծածկում է մի նահատակի յուզիչ պատկեր։ Բայրօնը շատ սիրուն է արտայայտել այցելուի այդ զգացմունքը իր «Մարինո Ֆալիէրո» դրամայի մէջ՝ «Իմ անուան վրա ձգված այս սեւ քողը,—ասում է դօժը մահից առաջ,—որ իբր թէ պիտի ծածկի իմ դէմքը,

*) «Մշակ» № 147.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թռուցիկ տպաւորութիւններ)

VII

Վենետիկ հասածս օրից ահա երրորդ անգամն է, որ այցելում եմ դքսական կամ, ինչպէս սովորութիւն է անուանել, դօժերի պալատը։ Վենետիկի հանրապետութեան ամբողջ պատմութիւնն այստեղ է. այս գոյնզգոյն պատերը, մարմարէ այս սիւներն ու քանդակները դեռ կրում են իրանց վրա գոռոզ օլիգարխիայի փառքը եւ ամեն մի զինուորական փառքի հետ կապված զարհուրելի ոճիրները։ Ս. Մարկոսի հարաւային պատի տակ եւ գլխաւոր պալատի մուտքի առաջ բարձրանում են, օրինակ, 4—5 մետր բարձրութեամբ երկու համաչափ եւ քառակուսի մարմարէ սիւներ։ Սիրուն գործ են, եւ հետաքրքիր ու գեղասէր ճանապարհորդները զննում են նրանց գեղեցիկ քանդակները, մանուկներն առաւօտից երեկոյ վազվզում են նրանց շուրջը, դատարկապորտ կամ յոգնած վենետիկցին ծոյլ ծոյլ պառկում է նրանց պատուանդանների տակ, բայց հէնց այդ սիւներից են կախել ամբողջ մի քանի դարեր անմեղ թէ մեղաւոր դատապարտեալներին։ Լաւ է, որ քարերը համր են, լուռ... Մենք էլ անցնենք։

Պալատի գլխաւոր մուտքը ճարտարապետական հազուագիւտ գործ է՝ գօթական ճաշակով։ Դռան շուրջը քանդակների փնջերի մէջ չորս սիմվոլական արձաններ ներկայացնում են Խոհեմութիւն, Յոյս, Բարեգործութիւն եւ Ոյժ։ Շինութեան երկու ճակատները, որոնք նայում են հարաւ եւ արեւելք, ճարտարապետական մի անօրինակ նժուշ են ներկայացնում մաւրիտանական եւ գօթական ճաշակների խառնուրդով։ Կարմ, բաւական հատ եւ կոլոր սիւների շարքի վրա բարձրանում է սիւների համաչափ եւ քառակուսի մարմարէ սիւներ։ Սիրուն գործ են, եւ հետաքրքիր ու գեղասէր ճանապարհորդները զննում են նրանց գեղեցիկ քանդակները, մանուկներն առաւօտից երեկոյ վազվզում են նրանց շուրջը, դատարկապորտ կամ յոգնած վենետիկցին ծոյլ ծոյլ պառկում է նրանց պատուանդանների տակ, բայց հէնց այդ սիւներից են կախել ամբողջ մի քանի դարեր անմեղ թէ մեղաւոր դատապարտեալներին։ Լաւ է, որ քարերը համր են, լուռ... Մենք էլ անցնենք։

Պալատի գլխաւոր մուտքը ճարտարապետական հազուագիւտ գործ է՝ գօթական ճաշակով։ Դռան շուրջը քանդակների փնջերի մէջ չորս սիմվոլական արձաններ ներկայացնում են Խոհեմութիւն, Յոյս, Բարեգործութիւն եւ Ոյժ։ Շինութեան երկու ճակատները, որոնք նայում են հարաւ եւ արեւելք, ճարտարապետական մի անօրինակ նժուշ են ներկայացնում մաւրիտանական եւ գօթական ճաշակների խառնուրդով։ Կարմ, բաւական հատ եւ կոլոր սիւների շարքի վրա բարձրանում է սիւների

գործարանից 13 գործարան ամբողջ տարվայ ընթացքում մատնված են եղել անգործութեան, չեն բանեցրվել։

Մնացած 71 գործարանում պատրաստված է կերոսին, իւղեր 134,108,900 պուդ եւ նաւթային մնացորդներ 287,300,000 պուդ։ Արտահանված է Բագուից ընդհանրապէս՝ կերոսին, իւղեր, հում նաւթ եւ նաւթային մնացորդներ—443,100,000 պուդ. արտահանութիւնը կատարվել է երեք գծով՝ Կասպից ծովով—352,900,000 պուդ, անդրկովկասեան երկաթուղով՝ 87,800,00 եւ Վլադիկաւկազի երկաթուղով՝ 1,228,166 պուդ. Բաթումից արտահանված է դէպի Ռուսաստան 4,704,718 պուդ, դէպի արտասահման՝ 61,058,960 պուդ։ Արտասահման ուղարկված 61 միլիոն քանակութիւնից ուղղվել է Եւրոպա՝ Աւստրիա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Թիւրքիա, Իտալիա եւ այլն 37,570,759, իսկ արեւելեան վաճառանոցները՝ Եգիպտոս, Ալժիր, Հնդկաստան, Չինաստան, Եապոնիա եւ այլն 23,289,143 պ., Նովորոսիյսկից արտահանված է դէպի Ռուսաստան 4,109,399 պ., իսկ դէպի արտասահման՝ 15,598,211 պ., որից Եւրոպա է ուղղված 9,369,345 պուդ, արեւելեան վաճառանոցները 6,228,866 պուդ։ Ուրիշ խօսքով՝ թէ Բաթումից եւ թէ Նովորոսիյսկից արտահանվել է Եւրոպա 46,940,104 պ., Ասիա եւ Աֆրիկա՝ 29,518,009 պուդ։

Բաթումից արտահանած ընդհանուր քանակութեան 73%-ը պատկանում է երկու ֆիրմայի՝ Каспийско-Черноморское общество (Բատումի) եւ Նոբել եղբայրների ընկերութեան։ Նախընթաց 1899 թւականին սրանց արտահանածը կազմում էր 58% միայն, ասել է թէ 15% աւելի են արտահանել 1900 թւի ընթացքում։ Իսկ Մանթաշեան եւ ընկ. ֆիրման, որ արտահանել էր 1899 թւին 11,963,000 պ. կամ արտահանած ընդհանուր քանակութեան 17,9%, 1900 թ. արտահանել է 6,494,000 կամ 10,6%։

Այստեղ աչքի է առնվում միմիայն այն քանակութիւնը, որ արտահանվել է Բաթումից։

Գործարաններում ծառայողների եւ բանւորների թիւը կազմում է 3955, որոնցից 42 հոգի փոքրահասակ, իսկ 1899 թւին եղել է 3372, որոնցից 75 հոգի փոքրահասակ։ Ասել է թէ այստեղ եւս մի տարվայ ընթացքում աւելացել է 583 հոգի։

Ըստ ազգութեան, առաջին տեղը բռնում են ռուսները՝ 2165, յետոյ պարսիկները՝ 1140, հայերը՝ 337, տեղական թուրքերը 240 եւ այլն։ 3955 հոգուց 1576 հոգի բանւորներ են, 1114 հոգի՝ փականակագործներ, հիւսներ եւ այլն, իսկ մնացածները՝ մեքենավարներ, հնոցապաններ, մեքենավարների օգնականներ եւ այլն։

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԲԱԼԱԽԱՆԻՑ

—

Յունիսի 20-ին

Միրզոեվների նաւթարդիւնաբերական ընկերութեան գրասենեակում ծառայող մի քանի հայ երիտասարդների մէջ սրանից երկու ամիս առաջ մի բարի միտք է յղանում, այն է տեսնելով, որ Բալախանիում բացի ֆիզիկական ծանր աշխատանքից ոչինչ մխիթարական բան չը կայ, վճռում են ազատ միջոցներին զբաղվել հայոց գրականութեամբ։

Այդ նպատակը իրագործելու համար հանգանակում են իրանց մէջ մօտ 150 ռուբլի եւ ուղարկում Թիֆլիսի նախկին հայոց հրատարակչական ընկերութեան, որպէս զի այդ գումարով ուղարկեն ընթերցանութեան ընտիր գրքեր։ Այժմ արդէն ստացված են մօտ 80-ի չափ գրքեր, որոնք փոփոխակի կարդացվում են ցանկացողների մէջ ազատ միջոցներին։

Միտքը շատ յարգելի է, քանի որ ծառայողների պարապ ժամերը իզուր չեն անցնի եւ նրանք կունենան մասնաւոր տեղեկութիւններ հայոց գրականութիւնից։ Միտքը յարգելի է մանաւանդ այն կողմից, որ այդ ընտիր գրքերից կարող են օգտվել ոչ միայն ունեւոր երիտասարդներ, այլ եւ նրանք, որոնք ցանկութիւն ունեն ընթերցանութեամբ զբաղվելու, բայց տեղական հանգամանքները եւ թէ նիւթական սուղ միջոցները թոյլ չեն տալիս օգտակար գիրք ձեռք բերել կարդալու համար։

Բացի սրանից, նոյն նաւթարդիւնաբերական ընկերութեան կառավարիչ պ. Արշակ Սարգսեանցի կարգադրութեամբ բացի տեղումս հրատարակվող ռուս «Каспій» լրագրից Թիֆլիսից ստացվում են ծառայողների համար հայերէն ամենօրեայ հրատարակութիւններ, նաեւ մի քանի ռուսերէն ամենօրեայ լրագիրներ։ Բայց ցաւով սրտի պէտք է խոստովանվել, որ պ. կառավարչի այդ բարի դիտաւորութիւնը ի չար է գործ դնվում, որովհետեւ գրասենեակում ստացվող լրագիրներից օգտվում են միայն մի քանի ծառայողներ, որոնց մօտ էլ մնում են մինչեւ վերջ այդ լրագիրները, իսկ միւսները զուրկ են մնում բոլորովին։ Գոնէ եթէ կարդալուց յետոյ վերադարձնէին, որպէս զի ուրիշներն էլ օգտվէին այդ լրագիրներից, ոչինչ, բայց բաւական է եթէ նոր ստացվող լրագիրը մի որ եւ իցէ ծառայողի ճանկն ընկաւ, նա դառնում է նրա սեփականութիւն եւ այլ եւս նրանից յոյսը պէտք է կարի մարդ, որ նա էլ լոյս աշխարհ չի երեւայ։ Երբեմն էլ պատահում է այսպիսի մի դէպք. ուրիշի լրագիրը ստանում է մի ուրիշ մարդ եւ այն ժամանակ լրագրի տէրը կամ բոլորովին ձեռք է վերցնում եւ կամ մի քանի ժամ որոնելուց յետոյ հազիւ հազ կարողանում է գտնել նրան։

Ցաւուկ կը խնդրէինք պ. Ս. Մատինեանցից, որը աւագ գործակատար է այդտեղ եւ որին յանձնված է, բացի այլ գործերից, նաեւ այդ լրագիրների հսկողութիւնը, ուշք դարձնել այդ բանի վրա։

Յակոբ Խերոդինեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալքալաք, յուլիսի 7-ին

Ինչպէս յայտնի է, Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցին մեր գաւառում տասնիններորդ հազար (19,000) դեսեատին հող ունի՝ բաղկացած ընտիր վարելահողերից եւ արօտատեղերից։ Այդ ահագին կալուածքները հոգեւոր կօնսիստորիան կարճ ժամանակով միայն կառավարել է իր աշխարհական եւ հոգեւոր ներկայացուցիչներով, որոնք աւելի իրանց գրպանի մասին են հոգացել, քան գիւղացու կամ եկեղեցու շահերի մասին։ Իսկ հիմա, տասնեակ տարիներ շարունակ, այդ կալուածքները կապալով են տրվում մասնաւոր անհատների։ Ո՛ւմ չէ յայտնի, որ մասնաւոր կապալառուները, մանաւանդ հողային կապալառուները, գրեթէ ամեն տեղ եւ ամեն ժամանակ հարստահարող բնաւորութիւն են ունեցել եւ ունեն. մնթէ յայտնի չէ, որ կապալավարձի չափ էլ, եթէ ոչ աւելի, իրանք կապալառուներն են յաճախ կլանում։—Օրինակ՝ այդ կալուածքները ներկայումս կապալով են տրված տարեկան 16,600 ռուբլիով. բայց՝ լայնարձակ դաշտերը իր քրտինքով ոռոգող գիւղացին, ի հարկէ, մէկին երկու է տալիս, եւ Սօլոլակում նստած կապալառուն տարեկան տասնեակ հազար է ստանում գիւղացու գրպանի կօպէկներից։ Մնթէ գիւղացու զրկանքը, հարստահարութիւնը կարելի է համաձայնեցնել եկեղեցու վսեմ գաղափարների հետ, մնթէ պէտք է, որ եկեղեցական կալուածքների միջոցով գիւղացուն զրկանք պատճառեն։ Վայրենի չոբանն անգամ իր ոչխարի հօտը գայլերից ազատելու համար՝ պատրաստ է իր անձը զոհելու. այդ ինչպէս է, որ մեր հոգեւոր հայրերը, մեր այդ «քաջ հովիւները», իրանց բանաւոր հօտը յանձնում են գայլերի անօրէնութեանը...

Այս աշնան լրանում է մեր գաւառի այդ եկեղեցապատկան կալուածքների կապալի ժամանակամիջոցը։ Ցանկալի է, որ հոգեւոր իշխանութիւնը հիմա այդ կալուածքները մասնաւոր անհատի չը տայ, այլ անմիջապէս իրանց-գիւղացիներին տայ կապալով։ Մենք համոզված ենք, որ գիւղացիք թերեւս մի բան էլ աւելի տան մասնաւոր կապալառուի ներկայ վճարից, կապալավարձը անպայման իր ժամանակին եւ լրիւ կը վճարեն, կանոնաւոր եւ վարչական ծախսեր անելով հանդերձ՝ իրանք կօգտվեն նիւթապէս եւ, մանաւանդ, բարոյապէս։

Բարեկամական խորհուրդ ենք տալիս թէ այդ կալուածքներում գտնվող եւ թէ չը ջկայ գիւղերին՝ համերաշխութեամբ միանալ, ներկայացուցիչներ ընտրել եւ ուղարկել, որ դիմեն հոգեւոր իշխանութեանը, որ այդ հողերը անմիջապէս իրանց տրուեն առանց աճուրդի։

Սպառողական, հայթայթիչ, արդիւնաբերող եւ այլ տեսակ միութիւնների մեր դարում մնթէ հաւաքական ուժերով կապալով հող վերցնելու շահաւէտութեան գաղափարը անմատչելի է մեր գիւղացիներին. չէ՞ որ դա մեր պապերի փեշակն է։ Մնթէ առանց հարստահարող միջնորդների եւ «աղաների», առանց նրանց բարոյապէս փչացած «վառավարիչների» հայհոյանքներին, լուտանքներին եւ ուրիշ կոպտութիւններին չէ՞ք կարող «եօլա գնալ». մնթէ անպատճառ ձեր գլխին պէտք է տասնեակ «աղաներ» կանգնած լինեն. մնթէ ձեր մէջքից պէտք է անպատճառ կաշու շերտեր հանեն։ Պատիւը, ինքնասիրութիւնը աստուածային գանձ է. պաշտպանեցէք ամենից առաջ դրանց եւ ապա ձեր արդար վաստակի պտուղ կօպէկները։ Միացէք, եղբայրներ, եւ կը տեսնէք, որ դուք աւելի ուժեղ էք՝ քան Սօլոլակի երջանիկը. միութիւնը ոյժ է։ Չը լսէք աղայատէր պնակալէզների խորամանկ ու վնասակար խորհուրդներին, որոնք ձեր անմիաբանութիւնից օգտվում են իրանց մասնաւոր շահերի համար, որոնք սովոր են պնակները լիզելու...

Այս լուրջ եւ կարեւոր գործում մեծ պարտականութիւն ունեն կատարելու Կարզախ գիւղի երկու հասկացող քահանաները եւ առհասարակ Կարզախի եւ Սուլդայի բանիմաց երիտասարդները, որոնց ուշադրութիւնը վաղօրօք հրաւիրում եմ այս կենսական խնդրի վրա։

Սալլիմեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Յուլիսի 11-ի գիշերը, ժամը 1-ից անց, Թիֆլիսի 5-րդ քաղաքամասի «Միջին փողոց» կոչված փողոցում գողեր են մտնում Սարգսեանի ամբարը։ Գիշերապահ հասասը նկատելով այդ՝ աղմուկ է բարձրացնում եւ ոստիկան է կանչում։ Այդ միջոցին գողերից երկուսը փախուստ են տալիս, իսկ մէկը տեղն ու տեղ բռնվում է, չնորհիւ մի քանի մարդկանց, որոնք չատապով հաւաքվել էին գիշերապահի աղմուկից։ Մինչեւ փողոցային ոստիկանի յայտնվելը, հասասը դաշոյնը հանած ընկնում է փախչողների ետեւից. ոստիկանն էլ, հետեւելով նրանց, սկսում է ատրճանակ արձակել, բայց, դժբաղդաբար, կարծելով, թէ հասասն էլ գող է, բոլոր փամփուշտները պարպում է նրա վրա։ Թէպէտ հասասը աղաղակել է, որ ինքը գիշերապահն է, սակայն փողոցային ոստիկանը, նետիկ էին եկել պապ Ալէքսանդրը եւ Բարբարուսա կայսրը։ Ամենքը թափորով դիմեցին Լիդօ կղզին. այնտեղ պապը յանձնեց դօժ Սեբաստին Զիանին մի մատանի այս խօսքերով՝ «Ա՛ռ, ով դօժ, այս մատանին, որպէս մի կապ, որ պիտի պահի ծովը Վենետիկի իշխանութեան ներքոյ. այս մատանիքով կը հարսնացնես ծովը, եւ թող յաջորդ սերունդներն իմանան, որ Վենետիկի զէնքը իշխել է ալիքների վրա եւ թող ծովը հպատակվի այդ իշխանութեան, ինչպէս կինն իր ամուսնուն»։ Պատրիարքը օրհնեց մատանին եւ դօժը ձգեց այն՝ ծովի մէջ, ասելով՝ «Ծով, մենք քեզ հարսնացնում ենք ի նշան մեր կատարեալ եւ յարատեւ իշխանութեան»։ Ահա այս տօնն է, որ այնպէս սիրուն կերպով պատկերացրել է Տիէպոլօն մի այլաբանական նկարով։

Ես զանց եմ անում միւս ոչ պակաս հետաքրքիր նկարները. կասեմ միայն, որ ամեն կողմում աչքի է ընկնում վերածնութեան դարի նկարչութեան առանձնայատկութիւններից գլխաւորը՝ սիւժեների ընտրութեան մէջ իշխող այդ բացարձակ քմահաճոյքը, որ յատուկ է անցողական շրջաններին։ Այդ նկարների մէջ ոչինչ չի խնայված վարպետների կողմից, որպէս զի մերկ մարմինների փարթամութեան վրա գալարվող կոր գծերը հեշտագրգիռ լինեն. թւում է, թէ վերածնութեան դարի նկարիչը մի առանձին հաճոյք է զգացել այդ շարժուն, գալարուն, թարմ մարմինների առաջ, որոնք այնպէս հմայիչ խորհրդաւորութեամբ լողում են սպիտակ շամանդաղի մէջ եւ այս մնթոլորտը դարձնում մեղկ ու գրգռիչ։ Զուտ կրօնական սիւժեներն անգամ, ինչպէս մարտիրոս կանայք, նկարված են որպէս յունական կրքոտ դիցուհիներ իրանց կանացի մարմինների գրաւչութեան ամբողջ փայլով։

Ա. Ահարոնեան

աւելի աչքեր կը գրաւի, քան ժողովրդի բռնակալների հազար պատկերներ, կտաւի վրա փրռված ճոխ զգեստներով»։

Մեծ խորհրդի դահլիճից դէպի զանազան կողմեր իրար մէջ բացվում են բազմաթիւ մեծ ու փոքր այլ դահլիճներ, որոնք հանրապետական կառավարութեան զանազան մասերի գործառնութեան են յատկացված եղել։ Բոլոր այդ սենեակների պատերն ու առաստաղը զարդարված են վերածնութեան դարի իտալական մեծ վարպետների, ինչպէս Պօլ Վերօնեզի, Տինտորետտօի, Կրտսեր Պալմայի, Տիցիանի, Բոնիֆացիօսի եւ ուրիշ շատ շատերի նկարներով, որոնց մէջ կան բազմաթիւ գլուխ-գործոցներ։ Այստեղ աչքի է ընկնում վերածնութեան դարի այն տենդոտ եւ տակաւին անորոշ սահմանների մէջ յեղյեղվող գեղարուեստը, որ յորդացած գետի պէս ընթանում է մերթ ափերից դուրս թափվելով, մերթ կատաղաբար ու յախուռն մի որոշ, յարմարաւոր հուն փնտրելով. բայց միշտ հսկայ իր գալարումներով եւ գեղեցիկ իր անորոշ ծփանքներով։

Միջնադարեան խաւարից աղատված եւ վիզը ծուռ ու փայտեայ ձեռներով ու ոտներով սրբերի գեղարուեստից ձանձրացած միտքն է այս, որ առաջին անգամ դուրս է ընկել լոյս աշխարհ եւ վազում է հեւ ի հեւ դէպի ամեն ինչ, որ գրաւում է։ Եւ հինը եւ նորը, կլասիկ դիցաբանութիւնն ու քրիստոնէութիւնը, բիբլիական սրբերն ու հին դիւցազները, Մովսէսն ու Հերկուլեսը, Աստուածածինն ու Վեներան, միստիկ մարտիրոսներն ու էրոտիկ պատկերներն իրար են խառնված եւ ստեղծվել է մի անցողական շրջան։

Այսպէս, օտար դեսպանների ընդունելութեան դահլիճում (Anticollegio) Պօլ Վերօնեզի մի չեզեօվը կայ, «Եւրոպայի առեւանգվելը Զեւսից». անանցած աստուածը մեղկ քնքշութեամբ պառկել է խոտերի վրա, թոյլ տալով գեղեցկուհուն նստել իր մէջքին, եւ մի եւ նոյն ժամանակ պարանոցը յետ ծռած նայում է, թէ ինչպէս յաւերժահարսը տեղաւորվում է, ինչպէս նաժիշտները պակում են նրան ծաղկի գիրլեանդներով. կենդանու այդ դիրքը զարմանալի է։ շրթունքներն այնքան պագչոտ են, կրքի այնպիսի զօրեղ արտայայտութիւն կայ այդ անասնական դնչի վրա, աչքերն այն աստիճան բորբոքիտ փայլ ունեն, որ մարդ ամեն ինչ մոռացած նայում է միմիայն եզան այդ զարմանալի գլխին, որ, կատարեալ անասուն մնալով հանդերձ, մի ինչ որ տարօրինակ հանելուկ, մի գերմարդկային գաղտնիք ունի թագցրած իր արտաքին անբանութեան տակ։ Այդ նկարի կողքին է «Ցակոբ վերադառնում է Քանան»...

Մտնում ենք այժմ Վենետիկի տխրահռչակ Տասնի խորհրդարանը (Consiglio dei dieci), դօժերի պալատի ամենատխուր պատմութիւն ունեցող մասերից մէկը, որի անունը կապված է այնքան մութ դարերի, գաղտնի սպանութիւնների, բանտային տանջանքների, անարդար դատապարտութիւնների հետ։ X-ի խորհուրդը աղնուական օլիգարխիայի վրէժխնդրութեան գործիքն էր, ուղղված բուն ժողովրդական իրաւունքների, ժողովրդական շարժման եւ նրա ռամկավար պարագլուխների դէմ։ Դասակարգային կամայականութիւն, ոյժի անիրաւութիւնը մարմնացնող հաստատութիւն էր այդ, նման բոլոր այն հաստատութիւններին, որով բռնակալներն ամեն երկրում, ամեն ժամանակում աշխատել են պահպանել իրանց զազիր տիրապետութիւնը։

Այս խորհուրդը կազմակերպվեց XIV դարի սկզբում, երբ serrata օրէնքով իր իրաւունքներից իսպառ զրկված ժողովուրդը երկու անգամ փորձ փորձեց խորտակել աղնուականների օլիգարխիան, բայց երկու անգամն էլ անաջող, եւ նրա պարագլուխները Մարկո Բօկկոնիօ (1300-ին) եւ Բաժամօնտ Տիէպոլօ (1310-ին) իրանց ընկերներով զոհ գնացին աղնուականների կատաղութեանը, պատմական սիւների վրա կախաղան բարձրանալով։ Քաղաքական յանցանքները քննելու եւ պետական կարգերը պաշտպանելու համար կազմակերպված այս խորհուրդը կամաց-կամաց դարձաւ սարսափելի ոչ միայն ժողովրդի, այլ եւ դօժերի համար. լրտեսների, գաղտնի գրութիւնների, գիշերային դատերի լուռ սոսկումը իջաւ քաղաքի վրա եւ հանրապետութեան անունը պղծվեց բազմաթիւ ոճիրներով։ Պատերի վրա դեռ ցոյց են տալիս այն բացուածքները, որտեղից գաղտնի մատնութեան թղթերը ձգվում էին առիւծների բերանը եւ անմեղներին կորցնում։ Առիւծները ջարդվեցին 1797 թւին Նապոլէօնի հրամանով, բայց բացուածքը դեռ մնում է եւ նայում է այցելուին ինչպէս մահվան աչք։ Այնքան դարեր յետոյ՝ այժմ էլ այս դահլիճը մի ճնշող տպաւորութիւն է գործում. թւում է, թէ նրա մթնոլորտում, այդ նկարների տակ, ողում է ոճիրը եւ մի գաղտնի աչք նայում է քեզ անկիւնից, եւ այդ բոլորն անշուշտ նրա համար, որ այդ սեւ պատմութիւնը մեռնող դարերի հետ դեռ լեգենդա չէ դարձել...

Այս դահլիճում էլ նկարների սիւժետը ներկայացնում է մի տեսակ խառնուրդ հնի եւ նորի. աւետարանի մոգերն ու հռոմէական Մարսը, պապերն ու կայսրները իրար հետ են, իրար կողքի. Պօլ Վերօնեզի երկու աննման գործերի ընդօրինակումը կայ այստեղ, մէկը մի հրաշալի Իւնոնա, որի իսկականը գտնվում է Բրիւսէլում, եւ միւսը՝ Իւպիտերը, որ կայծակնահար է անում չորս ոճիրները, X-ի խորհրդի իմաստուն քննութեամբ բացված. աշխարհը շատ քիչ բան կը կորցներ, եթէ Իւպիտերը կայծակնահար անէր հէնց աշխարհի բոլոր X-երի խորհուրդները...

Այլաբանական նկարներից՝ իր պատմական նշանակութեան պատճառով առանձին յիշատակութեան արժանի է Տիէպոլօի «Վենետիկի եւ Նեպտունի ամուսնութիւնը» Զորս դռնանի դահլիճում։ Ամենայն տարի հանրապետութիւնը մեծ շքով կատարում էր այդ անօրինակ ամուսնութեան տօնը։ Ամենից շքեղը կատարվեց 1177-ին, երբ հաշտվելու համար Վենետիկ եկել պապ Ալէքսանդրը եւ Բարբարուսա կայսրը։ Ամենքը թափորով դիմեցին Լիդօ կղզին. այնտեղ պապը յանձնեց դօժ Սեբաստին Զիանին մի մատանի այս խօսքերով՝ «Ա՛ռ, ով դօժ, այս մատանին, որպէս մի կապ, որ պիտի պահի ծովը Վենետիկի իշխանութեան ներքոյ. այս մատանիքով կը հարսնացնես ծովը, եւ թող յաջորդ սերունդներն իմանան, որ Վենետիկի զէնքը իշխել է ալիքների վրա եւ թող ծովը հպատակվի այդ իշխանութեան, ինչպէս կինն իր ամուսնուն»։ Պատրիարքը օրհնեց մատանին եւ դօժը ձգեց այն՝ ծովի մէջ, ասելով՝ «Ծով, մենք քեզ հարսնացնում ենք ի նշան մեր կատարեալ եւ յարատեւ իշխանութեան»։ Ահա այս տօնն է, որ այնպէս սիրուն կերպով պատկերացրել է Տիէպոլօն մի այլաբանական նկարով։

Ես զանց եմ անում միւս ոչ պակաս հետաքրքիր նկարները. կասեմ միայն, որ ամեն կողմում աչքի է ընկնում վերածնութեան դարի նկարչութեան առանձնայատկութիւններից գլխաւորը՝ սիւժեների ընտրութեան մէջ իշխող այդ բացարձակ քմահաճոյքը, որ յատուկ է անցողական շրջաններին։ Այդ նկարների մէջ ոչինչ չի խնայված վարպետների կողմից, որպէս զի մերկ մարմինների փարթամութեան վրա գալարվող կոր գծերը հեշտագրգիռ լինեն. թւում է, թէ վերածնութեան դարի նկարիչը մի առանձին հաճոյք է զգացել այդ շարժուն, գալարուն, թարմ մարմինների առաջ, որոնք այնպէս հմայիչ խորհրդաւորութեամբ լողում են սպիտակ շամանդաղի մէջ եւ այս մթնոլորտը դարձնում մեղկ ու գրգռիչ։ Զուտ կրօնական սիւժեներն անգամ, ինչպէս մարտիրոս կանայք, նկարված են որպէս յունական կրքոտ դիցուհիներ իրանց կանացի մարմինների գրաւչութեան ամբողջ փայլով։

Ա. Ահարոնեան

չը հասկանալով այդ, սպանում է տեղն ու տեղ թշուառին, իսկ գողերը ազատվում են։ Այդ դժբաղդ հասասը, ամբողջ տասնեւհինգ տարի գիշերապահութիւն է արել յիշեալ փողոցում. ուստի, մեր կարծիքով, պարտաւորութիւն կայ այդ փողոցի խանութպանների վրա՝ փոքր ինչ օգնել նիւթապէս նրա անճար ընտանիքին»։

—

Սաստիկ անձրեւների պատճառով, որոնք առաջացրել են փլվածքներ եւ քանդել են ճանապարհները, հաղորդակցութիւնը Բաթում—Ախալցխայի ճանապարհով կտրված է։

—

Ինչպէս յայտնի է, իբրեւ ժամանակաւոր միջոց, լատիներէն լեզուի դասաւանդութիւնը դադարեցնվում է արական գիմնազիաների I եւ II դասարաններում, իսկ յունական լեզուինը—III եւ IV դասարաններում. յայտնի է նոյնպէս, որ այդ լեզուների փոխարէն ընդարձակվում է աշխարհագրութեան եւ ռուսաց լեզուի դասաւանդման ծրագիրը, մտցնվում է առաջին դասարանից պատմութեան, մի նոր լեզուի եւ, ըստ հնարաւորութեան, նաեւ բնական գիտութիւնների դասաւանդութիւնը։ Այժմ ուսումնարանական շրջանի հոգաբարձուները հրամանագրել են միջնակարգ դպրոցների վերատեսուչներին փոփոխութիւնների ենթարկել դասերի բաժանման ցուցակը մինչեւ առաջիկայ ուսումնական տարվայ սկիզբը։ Բացի սրանից, միջնակարգ դպրոցների վարչութիւններից պահանջվում է հաղորդել իրանց եզրակացութիւնները այն մասին, թէ հնարաւոր չէ՞ արդեօք դասաւանդման ծրագրի մէջ տեղի ունենալիք փոփոխութիւններից առաջացած ծախքերը ծածկել դպրոցի մասնաւոր միջոցներով, եթէ ոչ ամբողջ 1901—1902 ուսումնական տարվայ, գոնէ նրա առաջին կիսամեակի ընթացքում։ Եթէ հնարաւոր չէ այս՝ հոգաբարձուները պահանջում են դպրոցական վարչութիւններից ներկայացնել նոր նախահաշիւ եւ ճշդութեամբ որոշել այն գումարները, որ հարկ կը լինի աւելացնել իւրաքանչիւր դպրոցի բիւջէտի վրա։ Ապա գիմնազիաների վերատեսուչները պարտաւոր են հաղորդել, թէ հին լեզուների դասատուներից որը պէտք է արձակվի պաշտօնից կամ թէ հնարաւոր չէ՞ այդպիսին թողնել ծառայութեան մէջ, յանձնելով նրան ուրիշ առարկաների դասաւանդութիւնը։

—

«Рус. Вѣд.» լրագրին գրում են Պետերբուրգից. «Լօնդօնից Պետերբուրգ վերադարձաւ երկրագործութեան եւ պետական կալուածների աւագ մասնագէտ Աւ. Քալանթար, որ ուղարկված էր այնտեղ քննելու մարգարինի հարցը։ Բանն այն է, որ Լօնդօնում, ռուսական կովի իւղը քննելիս, գտել են նրա մէջ մեծ քանակութեամբ մարգարին. այս պատճառով անգլիացի իւղավաճառները դատ բաց արին ռուս վաճառականների դէմ եւ տարան դատը։ Լօնդօն հասնելով՝ պ. Քալանթար փորձեց երկրորդ անգամ վերլուծել այն իւղը, որը արդէն վերլուծել էին եւ գտաւ, որ նրա մէջ ամենեւին մարգարին չը կայ։ Պ. Քալանթար ստիպված էր երեք դատական գործ վարել՝ ռուս վաճառականների դէմ յարուցված մեղադրանքի վերաբերմամբ, որոնցից երկուսը նա տարաւ առաջին ինստանցիայում, իսկ մէկը երկրորդ ինստանցիայում։

—

Ֆինանսների մինիստրութեան մէջ քննվում էր Պետերբուրգում համառուսական եւ միջազգային արդիւնագործական ցուցահանդէս կազմակերպելու հարցը 1903 թ-ին, երբ կը լրանայ մայրաքաղաքի հիմնարկութեան երեքհարիւրամեակը։ Կատարելապէս ցանկալի համարելով այս տեսակ ցուցահանդէսի կազմակերպութիւնը, մինիստրութիւնը սակայն անհրաժեշտ է համարում յետաձգել այդ ձեռնարկութեան իրագործումը 10 տարով, որովհետեւ ցուցահանդէսի ազող կազմակերպութեան համար մնացել է շատ կարճ ժամանակ։ Բացի սրանից, մինիստրութիւնը ի նկատի ունի ցուցահանդէսի բացումը նշանակել այն ժամանակ, երբ լրանում է Պետերբուրգը Ռուսաստանի մայրաքաղաք յայտարարելու երկհարիւրամեակը։

—

Կիեւի հանքագործական ընկերութիւնը, որ կազմել էին Կիեւի դրամատէրերը Սեմիպալատինսկի շրջանի հանքերը շահագործելու համար, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, անցնում է ամերիկական պղնձի թագաւոր Կլարկի ձեռքը։ Ձեռնարկութեան հիմնական դրամագլուխը աւելացրած է 15 միլիոն բուբլիով։ Կլարկ՝ ընկերութեան վարչութեան ներկայացուցիչներից մէկի հետ գընում է Սիբիր։

—

Նիժնիյ-Նովգորոդից «Рус. Вѣдомости» լրագրին հեռագրում են, որ տեղացի տիկինները, լսելով, որ Իբսէն հիւանդ է ու լաւանում է, ողջոյնի հեռագիր են ուղարկում նրան, ոգեւորված յարգանք յայտնելով «Նորայի» հեղինակին, որ մաքառում է, արդարութիւն պահանջելով կանանց համար։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են, «Ցունիսի միջին թուերից յաճախ տեղացող անձրեւների շնորհիւ, եղանակը այստեղ զով էր անցնում, բայց վերջին ժամանակներս դարձեալ սաստիկ շոգ է անում։ Ջիերին արեւահարութիւնից ազատ պահելու համար յարդէ գլխարկներ են դնում գլուխներին եւ սառուցով պատում մարմինները։—Յուլիսի 1-ից այստեղ մտցվեց օդի արքունական մենավաճառութիւնը։ Միայն հասակաւորներին են օդի բաց թողնում»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են յուլիսի 9-ից. «Այստեղ ամբողջ ամառը մի կաթիլ անձրեւի երես չենք տեսել, այլ միշտ շոգ եւ տօթ օրեր, որի հետ միասին սաստիկ տաք քամին էլ, բարձրացնելով փողոցի փոշին, մարդու աչքերը բերանը փոշով լցնում էր։ Սակայն այսօր վերջապէս մի լաւ անձրեւ եկաւ»։

—

Զաքաթալի շրջանի ԲԻԼԱՒԱՆ գիւղից մեզ գրում են յուլիսի 4-ից. «Ահա մի ամբողջ ամիս է, մի կաթիլ անձրեւի երես չենք տեսել։ Այնպիսի շոգեր են անում, որ մարդ դժուարանում է շունչ քաշել։ Եթէ այս մի քանի օրս անձրեւ չը գայ, ծխախոտը բոլորովին կը փչանայ։ Այս տարի այստեղ շատ քիչ բերք է ստացվել, եւ այդ պատճառով մթերքները սաստիկ թանգացել են. օրինակ՝ ալիւրը ծախվում է պուդը 1 ր. 40 կ.—1 ր. 50 կ., գարին 60—70 կոպէկ, կարագ իւղը 25—30, ձուն 100 հատը 80 կ.—1 ր.։ Տարին լրանում է, բայց տաւարի ժանտախտը դեռ չէ վերջացել ոչ այստեղ եւ ոչ շրջակայ գիւղերում»։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Դաշտերում կենդանութիւն է տիրում. այս տարի հացահատիկները առատ են, գիւղացիները ուրախ ուրախ մէկ կողմից արտերն են հնձում, միւս կողմից էլ կալ են կալսում։ Քանի օր կը լինի, որ Ախալքալաքի գաւառի գիւղացիները օրական 30—40 ձիարեռ ցորեն են տանում այստեղից իրանց գիւղերը։ Անձրեւների առատութեան պատճառով եգիպտացորենն էլ առատ հունձ է խոստանում, իսկ ինչ վերաբերում է ծառապտուղներին եւ բանջարեղէններին, նրանց առատութեանը չափ չը կայ»։

—

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Բագուի հայոց դրամատիկական խմբի անդամ պ. Վրոյր յունիսի 24-ին, կիրակի երեկոյեան այստեղ խաղաց «Դոն Գրիգորիո» պիէսը։ Ներկայացումը տեղի ունեցաւ հայոց նախկին ուսումնարանի դահլիճում եւ շատ աջող անցաւ։ Հասարակութիւնը շատ գոհ մնաց պ. Վրոյրի խաղից։ Մնացեալ դերակատարների մէջ աչքի էր ընկնում տ. Զարուհին, որ երեք դեր կատարեց այդ երեկոյ։ Ուսումնարանի փոքրիկ դահլիճը ծայրէ ծայր լիքն էր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, յունիսի 19-ին

Ըստ երեւոյթին՝ ուխտամոլ, սակայն իսկապէս՝ ախտամոլ մըն է վանեցին։ Ուրիշ անգամներ առիթ ունեցած եմ գրելու Վանի ուխտագնացութիւններու մոլութեանց մասին, ուստի այս անգամ չեմ ուզեր ծանրանալ այդ խնդրին վրա։ Կը բաւէ ըսել, որ այս մէկ քանի ամիսներու մէջ ուխտագնացութիւնները այնքան թափով կը կատարվին, որ ամեն խայտառակութիւններ կը գործվին։ Այսպէս պատահեցաւ անցեալ շաբթուն, այս շաբթուն եւ ով գիտէ դեռ քանի անգամներ ալ, կռիւ ու արիւնհեղութիւններ ալ անպակաս ըլլալու պայմանաւ։

Տխրահռչակ Բահրի փաշային օրով այս բաները քիչ մը սանձուածի պէս եղան, որովհետեւ բարեմոյն (?) փաշան օր մը Վարագայ ուխտաւորներու շռայլ ծախքերէն մենակ սամավարները հարել տալով, յաջորդ օրը ահագին ծախուց հաշիւ մը ցուցուց առաջնորդարանին եւ իրաւամբ բաւ. «Եթէ ձեր ժողովուրդը աղքատ է, ինչու ուրեմն այս զուր ծախսերը։ Ու մէկալ օր ադոր գործնական արդիւնքը եղաւ տուրքերու սարսափելի կերպով խիստ հաւաքումը։

Այս անամօթութեան հետ մեր ժողովուրդը անխոհեմ ալ է։ Եթէ թիւրքերը մեր տուներուն հետ մեր փլփլված եկեղեցիներն ալ այրեցին, 1—2 տարուան մէջ տափակ ու սխալ ըմբռնուած ազգասիրութիւնով մը ատոնք չինելու ելանք՝ նախկիններէն աւելի փառաւոր ու հոյակապ, նմանապէս մեր տուներն ալ։ Իսկ կողոպտուած բաներուն տեղը լեցուած է արդէն. հոգ չէ թէ խնայուած ապագայ մը, դրամագլխու վերջին մնացորդ մը կամ մինչեւ իսկ առձեռն պարտք մը ծախսուած է ադոր...

Ու երբ անդին զեղծում մը հրապարակվի, կամ կրթական կարեւոր գործի մը վրա ուշադրութիւն դարձնել ուզուի, կը տեսնես, որ ահագին ձայներ, զանգատներ, իրարանցում, հայհոյանք ու բանբասանք մըն է, որ կըսկսի պաշտօնական ու անպաշտօն հաստատութիւններէ, մեծ ու պզտիկ անձերէ։

Զէ՞ որ, ատոնց հաշուով, մեծ եկեղեցի մը աւելի լաւ է, քան մեծ դպրոց մը, ուր եկեղեցիին ուռեցուցած գրպաններուն փոխարէն՝ ուղեղներ կրնային լեցուել, եւ կամ, չէ՞ որ հրապարակաւ անձեր ու հաստատութիւններ քննադատել՝ արժանապատուութիւններ կրնայ վիրաւորել, հաչիւներ խանդարել, որ՝ մէկ խօսքով՝ անախորժ բան է, որ կրնայ անյաջողութիւններու մատնել զանազան ժապաւինեալ տեսակներ, կօնդակներ, յանձնարարականներ, տասնեակ մտածումներով շինուած ու խնամիական հաչիւներով շաղախուած... Ա՜խ, մեծ ու պզտիկ կեղծաւորներ...

Ինչպէս կիմանանք, Աւետիս քահանայ Շաղոյեան փոխանակ իր ընտանիքը Ատրպատականէն Վան փոխադրելու, էջմիածին գացեր է՝ կրկին լուսաւորչական եկեղեցին դիմելու համար, որովհետեւ իսպառ զզուած է եղեր կաթոլիկներէն։ Այդ պատճառով տեղոյս կաթոլիկներու կողմէ ահագին զայրոյթ մը կայ մեր դէմ, որ կրնայ օր մը ստոր վրէժխնդրութեան փոխուիլ, եթէ երբէք Շաղոյեան այս պարագաներուս փորձի Վան վերադառնալ։ Կարծեմ, ինքն ալ փորձառաբար կրնայ հասկնալ, թէ ինչ ըսել կուզեմ։ Լսածիս նայելով, Շաղոյեան վըշտացեր է իր նկատմամբ իմ գրածներէս. սակայն կը հարցնեմ, թէ՝ երբ ինք Այվատեանի մը կամ ուրիշի մը պատճառով կիրքի կելլէ ու դաւանափոխ կըլլայ, այդ պարագային ինչպէս պէտք էր վարուեր հասարակական շահերուն եւ իր կոչումին գիտակից խղճամիտ թղթակից մը՝ որ երբէք կեղծել ու շողոքորթել չի գիտեր։

Բաղէշի պատրիարքական փոխանորդ Եղիշէ վ. Զիլինկերեան երկու շաբաթէ ի վեր արձակուրդով հոս եկած է եւ օրերս Բիթլիս պիտի վերադառնայ։ Եղիշէ վարդապետ բարի, համեստ ու գործունեայ կղեր մը կերեւի, բայց ափսոս որ կուզէ իր պաշտօնին ձեռնթափ ըլլալ ու Երուսաղէմ քաշուիլ։

Ասկէ առաջ Խոշաբ գաւառի 20—25 գիւղ քիւրդերը խնդրագիր մը տուած էին ռուսաց հիւպատոսին եւ իրանց վիճակին պաշտպանութիւն խնդրած էին համիդիէներու դէմ, առարկելով, թէ կառավարութիւնն ալ զիրենք չի պաշտպաներ։ Պ. հիւպատոսը անձամբ քննութեան գնաց հոն ու վերադարձաւ շաբթուս, ու խնդիրը տեղեկագրեց իր կառավարութեան։

Խորէն—Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական լրագիրները հաղորդում են, թէ լորդ Կիտչէներ մշակել է պատերազմական գործողութիւնների մի նոր ծրագիր բօէրների դէմ եւ թէ այդ ծրագիրը քննված եւ հաւանութիւն է գտած մինիստրների խորհրդի վերջին երկու նիստերում։ Ծրագիրը կայանում է նրանում, որ պատերազմական գործողութիւնները բօէրական երեք գլխաւոր զօրաբաժիններին դէմ շարունակվեն անընդհատ բացառապէս անգլիական հեծեալների երեք գնդերի միջոցով, իսկ հետեւակ զօրքը գործ ածվի միայն երկաթուղային գծերը պաշտպանելու համար։ Այս նպատակով երկաթուղային գծերի երկարութեամբ կը կանգնեցնվի զինուորների անընդհատ շղթայ. բացի սրանից մի ժողովաչափ միմեանցից հեռու կը նշանակվեն փոքրաթիւ պահապան խմբեր, իսկ երկաթուղային հանգոյցների տեղերում եւ բոլոր ռազմագիտական կէտերում կը կենտրոնացնվեն աւելի նշանաւոր ոյժեր։ Այս ծրագիրը իրագործելու համար անգլիական կառավարութիւնը գնում է մեծ քանակութեամբ ձիեր։

—«Paris Nouvelles»-ին հաղորդում են Կ. Պոլսից. «Քրդական չէյխերից մէկը, Հայդար, հրատարակել է մի պրոկլամացիա, որի մէջ յայտարարում է, թէ շուտով տեղի կունենայ հայկական նոր կոտորած, եթէ հայերը կարճ ժամանակվայ մէջ չեն ընդունի մահմեդականութիւն։ Զը նայելով հայերի կողմից տուած գանգատներին՝ Հայդարի վարմունքը թողնված է անպատիժ»։

—Եթէ հաւատալու լինենք Լօնդօնի «Standard» լրագրին, Մայնցում տեղի կունենայ երեք միապետների՝ գերմանական եւ աւստրիական կայսրների ու անգլիական թագաւորի տեսակցութիւն։ Մայնցում միապետների հետ կը լինեն նաեւ երեք պետութիւնների առաջին մինիստրները։ Էդուարդ թագաւորը օգուտ կը քաղէ յարմար դէպքից եւ կարճատեւ այցելութեան կը գնայ Ֆրանց-Յովսէփ կայսրին, որին նա չէ տեսել այն օրից, երբ բարձրացել է Անգլիայի գահը։

—Բոլորովին առանձին տեղ կը բռնէ գործադուլների պատմութեան մէջ հոգեւորականների գործադուլը, որ այժմ սպառնում է Իտալիային։ Ինչպէս հաղորդում է «Nazione», Պավիայի շրջանում տեղի է ունեցել բազմաթիւ քահանաների ժողով, որոնք, քննելով քահանայական եկամուտների չափազանց պակասելու հարցը, վճռեցին գործադուլ սարքել, եթէ հոգեւորականների եկամուտները չեն հասցնվի նախկին չափին։ Ժողովը ընտրեց մի մասնաժողով, որ պէտք է կազմակերպէ գործադուլը. մասնաժողովի անդամ ընտրվեցին, ի միջի այլոց, Պավիայի, Կօրտէօլօյի, Բինասկոյի եւ Լանդրիանոյի վանքերի վանահայրերը։

—Կ. Պոլսի լրագիրներում տպագրված է հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնը. «Ի նկատ առնելով, որ անատօլիական նահանգներում բարեփոխութիւնների մասնաժողովի որոշումները իրագործված են եւ մասնաժողովը, շրջելով բոլոր նահանգները, անձամբ հաւատացաւ, որ ազգաբնակութիւնը կատարելապէս խաղաղ դրութեան մէջ է, սուլթանի իրադէով բարձրագոյն շնորհակալութիւն է յայտնվում մասնաժողովի անդամներին, նրանց վրա դրված պարտականութիւնները համարվում են կատարված եւ մասնաժողովը փակված»։ Այս բնորոշ յայտարարութեան առիթով «Moniteur Ottoman»-ը, «Մէվլէրէթ»-ը, «Օսմանլի»-ն եւ ուրիշ լրագիրներ նկատում են, թէ որովհետեւ սուլթան Աբդուլ Համիդ եւրոպական մտքով հասկացվող բարենորոգումները միշտ համարել է «իր գահի կործանման առաջին քայլը», ուստի մի տարի առաջ ստորագրելով «բարենորոգումների մասնաժողովի» կազմակերպութեան իրադէն եւ այժմ յայտնելով այդ մասնաժողովի գործունէութիւնը վերջացած, կամ ծիծաղում է մի քանի եւրոպական պետութիւնների պահանջների վրա կամ թէ մինիստրները չարաչար սխալեցնում են նրան՝ ստորագրել տալով նրան մի ֆիրման գոյութիւն չունեցող բարենորոգումների մասին։

—«Новое Время»-ին հեռագրում են Վիէննայից. «Vaterland» թերթը, որ պատկանում է ֆէօդալների կուսակցութեան, որոնց թւում կան պրինցուհի Կլէմէնտինայի ազգականներից եւ ծանօթներից, հաղորդում է, որ բոլգարական իշխան Ֆէրդինանդի՝ չերնոգօրիական պրինցուհի Քսենիայի հետ նշանադրվելուց յետոյ չուտով Բոլգարիան թագաւորութիւն կը յայտարարվի։—Սոֆիայի թիւրքական դեսպանը գնացել էր Էվքսինոգրադ, իբրեւ Բոլգարիայի վեհապետ սուլթանի ներկայացուցիչ, այնտեղի հանդէսներին ներկայ լինելու համար, բայց Ֆէրդինանդ իշխանը կարգադրել էր հրաւէր չուղարկել նրան, ուստի եւ նա վերադարձել էր Սոֆիա»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԹՌՈՒՑԻԿ ԶՐՈՑՑՆԵՐ

—

Զէ՞ կարող երեւակայել, թէ որքան պատիժ եմ կրել փոքր ժամանակս ճշմարտախօսութեանս համար։ Լաւ է, որ միշտ չէին պատժում, այլ երբեմն նաեւ գովում էին ու գգւում այն մարդիկ, որոնց ձեռնտու էր իմ ասած ճշմարտութիւնը։ Ինչ արած, այդպէս է աշխարհը, միայն այն ճշմարտութիւնն է քաջալերվում մարդկանց կողմից, որ ձեռնտու է նրանց։

Գիտէ՞ք պարսից այն շահի պատմութիւնը, որ Գիլհելմ կայսրի նման ոտանաւորներ էր գրում։

Արքայից արքան չէր բաւականանում իր իշխանութեամբ, իր փառքով, իր հարէմով։ Նա ուզում էր անպատճառ բանաստեղծի հռչակ ձեռք բերել։

Ինչպէս երեւում է, մեր ժամանակների նման ժամանակ է եղել այդ։ Շունը պոչը որ պտտում էր՝ մի բանաստեղծի քթի էր կպչում։ Մի տեսակ բանաստեղծական համաճարակ էր սկսվել, որ անգործ երիտասարդների շրջաններից հետզհետէ անցել էր բարձր շրջանները։ Նոյն իսկ շահի ալեզարդ բժիշկը, Լոհմանը՝ սկսել էր քնարերգական ոտանաւորներ գրել։ Բժշկից՝ ցաւը անցել էր պալատը և վարակել շահին։

Բոլոր պալատականները հիացած էին շահի ոտանաւորներից. բայց, իմանալով նրանց կեղծաւորութիւնը և արհամարհելով նրանց, նա կանչել է տալիս պալատը մի ծերունու, որ յայտնի էր իբրև անպայման ճշմարտախօս։

—Ինձ համար միայն քո կարծիքն է հետաքրքիր,—ասում է շահը։—Լսիր և անաչառիւ յայտնիր տպաւորութիւնդ։

Լսելով շահի ոտանաւորները, ծերունին խորհուրդ է տալիս կրակը դցել նրանց։

Շահը սաստիկ բարկանում է և հրամայում է ծերունուն երեք ամսով ուղարկել ճանապարհի համար քար ջարդելու։

Անցնում է մի տարի։ Շահը նորից լիշում է ծե-

բունուն, որ վաղուց վերջացրել էր պատժի ժամանակը, և, կանչել տալով, նոր ոտանաւորներ է կարդում։

Երբ շահը վերջացնում է, ծերունին գլուխ է տալիս և լուռ հեռանում է։

—Ո՞ւր ես գնում,—հարցնում է շահը,—ինչո՞ւ կարծիքդ չես յայտնում։

—Գնում եմ քար ջարդելու,—պատասխանում է ծերունին։

Ես էլ, ընթերցող, ամբողջ կեանքիս ընթացքում զբաղված եմ եղել այդպէս քար ջարդելով։ Չէք զարմանալ ուրեմն, եթէ ասեմ, որ ես վճռել եմ աշխատակցել «Մշակին», որի մէջ այնքան տարիներ և այնքան մարդիկ քարեր են ջարդել հայ հասարակութեան առաջադիմութեան ճանապարհը հարթելու համար։

Երբ վճիռս բոլորովին որոշվեց ինձ համար, ես ներկայացայ «Մշակի» խմբագրին և նրա հարցին, թէ ո՞վ եմ ես, պատասխանեցի, որ «քար ջարդող» եմ։

Խմբագիրը հարցրեց.

—«Մուրճակա՞ն» էք ուրեմն դուք։

Ես բացատրեցի։

—Ոչ,—առարկեցի,—ես միշտ եղել եմ և մնալու եմ «մշակական», իսկ ինչ վերաբերում է «Մուրճին», նա, ճիշտ է, այժմ սկսել է նոյնպէս «քար ջարդել», բայց առաջ, իր հին ըմբռնում, նա զբաղված էր մեծ մասամբ աթոռներ ջարդելով ի փառս իր խմբագրի, որ սակայն աւելի Դոն Քիշոտի էր նման, քան Ալէքսանդր Մակեդոնացու։

Մի քանի ուրիշ հարց ու փորձերից յետոյ իմ առաջարկութիւնը ընդունվեց։

Ֆոնոգրաֆ

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 յուլիսի

ԿԵՐՉ։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը Բերդեանակից ժամանեց այստեղ եւ ուղեւորվեց Թէոդոսիա, Եալտա եւ Բախչիսարայ։

ՍԱՐԱՏՕՎ։ Մամուլի գործերի գլխաւոր վարչութեան պետ իշխան Շախովսկոյ եկաւ այստեղ եւ այսօր ընդունեց տեղական լրագիրների ներկայացուցիչներին եւ պարբերական հրատարակութիւնների գրաքննիչին։

ՎԱՐՇԱՎԱ։ Երէկվայ հրդեհը, որից այրվեց գարեջրատունը, 200,000 բուբլու վնաս հասցրեց. գոյքը քիչ գումարով է ապահովագրված։

ՋԻՍՏՈՊՕԼ։ Հացահատիկների գները էժանանում են։

ԼՕՆԴՕՆ։ Հակատուբերկուլոզեան համաժողովում (կՕխ) պրոֆէսորը մի ճառ ասաց, որի գլխաւոր մասը վերաբերվում էր՝ տուբերկուլոզով հիւանդ անասուններից այդ հիւանդութիւնը մարդկանց փոխանցվելու հնարաւորութեան հարցին։ Այդ հարցը ատիպեց ճառախօսին, Բերլինի Շիւտց պրոֆէսորի հետ միասին եւ Գրուսիայի գիւղատնտեսութեան մինիստրութեան աջակցութեամբ, մանրակրկիտ փորձեր ձեռնարկել, որոնցից տեսան, որ բոլորովին անհնար է մարդկային տուբերկուլոզը փոխանցել եղջիւրաւոր անասունների վրա, չը նայելով մարդկային տուբերկուլոզի բացիլների անընդհատ եւ զանազանակերպ պատուաստման։ Դրանով ապացուցվում է, որ մարդու տուբերկուլոզը եւ անասունների տուբերկուլոզը բոլորովին տարբերվում են իրարից։ Անասուններից մարդուն տուբերկուլոզ փոխանցվելը կՕխ վերին աստիճանի անհաւանական է համարում, ուստի եւ աւելորդ է դատում դրա դէմ միջոցներ ձեռք առնելը։

ԼՕՆԴՕՆ։ Լուր է պատում, թէ Լօնդոնում բանակցութիւններ են տեղի ունենում Հարաւային—Աֆրիկայում խաղաղութիւն կապելու մասին։

Կրիւգէրսդորպից հաղորդում են. «Օլլէնբի գնդապետը զեկուցանում է, որ մի քանի օր առաջ մօտ հազար հոգի բօէրներ անցան Կրոմդրաայով Կրիւգէրսդորպի մօտով։ Բօէրների պատմածներից երեւում է եւ այն, որ բոլոր բօէր զօրապետները նորից պատրաստվում են առաջ խաղալ դէպի հարաւ»։

ԼՕՆԴՕՆ։ Ինչպէս Կիտչենէր Պրէտորիայից հեռագրում է, իրերով եւ մթերքներով բարձված ապրանքատար գնացքը, որ դուրս էր եկել Կապշտադտից, յուլիսի 7-ին, առաւօտեան Բիւֆորտվէյտից 8 մղոն դէպի հիւսիս յարձակման ենթարկվեց եւ կողոպտվեց Շէպէրսի զօրախմբի ձեռքով։ Անգլիացիներից երեք հոգի սպանվեցին եւ 18-ը վիրաւորվեցին։—Ֆրէնչ զեկուցանում է, որ Կրաբբէ գնդապետը 300 հոգուց բաղկացած զօրախմբով յուլիսի 8-ի լուսաբացին յարձակման ենթարկվեց Կրոյտցինգէրի կողմից Կրաղօկի սարերում։ Անգլիացիների ձիերը գլուխները փախցրին եւ Կրաբբէ ստիպված էր յետ նահանջել դէպի Մորտիմէր։ Ճակատամարտը տեւեց մի ամբողջ օր։ Անգլիացիների կորուստները չնչին են։

«Բէյտէրի գործակալութիւնը» լսել է, որ մինչեւ այժմ ոչ մի կարգադրութիւն չէ արված արքայական զոյգի արտասահման ուղեւորվելու մասին. չէ նշանակված նաեւ այդ ուղեւորութեան ժամանակը։

12 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 11-ին տհագին հրդեհ պատահեց Գուտուեվսկի կղզում. այրվեցին մաքսային վարչութեան պատկանող ձիթի, ձէթի եւ այլն պահեստները. վնասները ահագին են։

Հրատարակվեց հրաման զինուորական վարչութեանը. «Գվարդիական եւ հասարակաղօր հեծեալ պահեստի հիմնակազմերի բաժանմունքները վերածել պահեստի էսկադրօնների եւ կազմել մի հատ տասէսկադրօնանոց պահեստի հեծելազօր գունդ № 1, № 2 եւ № 3 գվարդիական հեծելազօր գնդերի հիմնակազմերից եւ մի հատ տասէսկադրօնանոց պահեստի հեծելազօր գունդ հասարակաղօր հեծեալ պահեստի հիմնակազմերից, № 1-ից մինչեւ № 17, իւրաքանչիւր գնդի կազմակերպութեան համար յիշեալ հիմնակազմերը միացնել այն կարգով, որով նրանք վերածված են այժմ հեծելազօր պահեստի բրիգադաների։ Նոր կազմակերպված գնդերը անուանել պահեստի հեծելազօր գնդեր, յատկացնելով նրանցից իւրաքանչիւրին այն հեծելազօր պահեստի բրիգադայի համարը, որից նա կազմվել է։ Վերջապէս, կազմել երեք-էսկադրօնանոց պահեստի զօրաբաժին կովկասեան հեծելազօր պահեստի հիմնակազմերից, անուանելով նրան կովկասեան պահեստի հեծելազօր զօրաբաժին»։

ՎԻԵՆՆԱ։ Էրցհերցոգ Ֆրանց Ֆէրդինանդի ամուսին իշխանուհի Գոգէնբէրգ այսօր ԿՕնոպիշտ դղեակում ազատվեց եւ աղջիկ բերեց։

ՄԻԴԼԲՈՒՐԳ (Կապի գաղութ)։ Լատեգանի բօէրական զօրաբաժնի բանակը յուլիսի 10-ին ենթարկվեց Լիւկեն գնդապետի յարձակման. 10 բօէր գերի բռնվեցին եւ աւար առնվեց 105 ձի ու 70 հրացան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՆԺԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԴԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա. Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կ. Ի. Դգելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Կ. Ի. Դգելիով—7—8 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կՕնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

մաթեմատիկական առարկաների համար հարկաւոր է համալսարանական ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ չաբաթական 18 դասով. ռոճիկը 1500 բուբլի։

Ցանկացողները կարող են դիմել Թիֆլիս, ս. Սարգիս, Գարեգին վարդապետ Յովսէփեանին։ 1—3

ԿԱՐԱ-ՄՈՒՐՃԱՆ

հրաւիրում է խմբի անդամներին, տիկիններին, օրիորդներին եւ պարոններին չնորհ բերել իր մօտ երեքշաբթի, յուլիսի 10-ին, երեկոյեան ժամը 6-ին, առաջիկայ Կովկասեան ցուցահանդէսին սեպտեմբերի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը երեսուն հաւերգ երգելու համար խումբ եւ ծրագիր կազմելու։ Ընդունվում են նոր անձինք եւս։ Тифлисъ, Мухранская улица, д. Мухранскаго. 3—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«Շէքսպիր եւ իր Համլէտ ողբերգութիւնը», Գ. Ադամեանի—1 ր.

«Թէչօի թուղթ», ֆարս-վոդեվիլ 1 արար. 50 կ.

«Կոռուապատճառը ես էի», կոմէդիա-վոդեվիլ 2 գործողութեամբ—50 կ.

«Նիսիա», վոդեվիլ 1 արարուածով—40 կ.

«Վայրենի», կատակերգ. 1 գործ.—50 կ.

«Մօդա», կոմէդիա 1 արարուածով—50 կ.

«Մարիա Ստիւարտ», ողբերգ. 5 արար.—50 կ.

«Թագի համար». ողբ. 5 արար.—50 կ.

«Կեղծ ազնուհիք», թատերերգութիւն—40 կ.

«Բանաստեղծը», կատակ. 1 արար.—25 կ.

«Մարիանա», դրամա 3 գործող.—1 ր.

«Շէքսպիր», «Օտէլլո», «Համլէտ», «Վենետիկի վաճառականը», «Արքայ Լիր», «Մակբէթ», եւ «Ինչպէս կուզէք», ողբ. 5 արար.—2 ր. 50 կ.

«Մանկական թատրոն», թարգ. տիկ. Մարգարիտի—1 ր.

«Սխալ հաշիւ», կոմէդիա 4 գործող. 1 ր.

«Մեղապարտ հրէշներ», դրամա 4 գործ. 30 կ.

«Խոչընդոտ», Դոդէի, կատակերգ. 4 ար. 50 կ.

«Աժուսինները», կոմ. 5 արար. Սունդուկեանցի—1 ր.

«Աւազակներ», Շիլլէրի, ողբերգ.—50 կ.

«Պատիւ», Զուդերմանի, կոմ. 4 գործ. 60 կ.

Նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասագրքեր։ Գումարով գնողներին զիջում կը լինի։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустяну. 1—2

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ՆԱՄՈՒՍ

վէպի հրատարակութիւնը, հեղինակի Թիֆլիսից բացակայութեան պատճառով, էլի քիչ կուշանայ։ Բաժանորդագրութիւնը շարունակվում է։ Բաժանորդագին է 1 բուբլի։ 5—6

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ՍՐԱԾՐՈՒՆՈՒ

աշխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմեն. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская, № 11), Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր։ Ամեն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել։

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագում. Նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ան ֆիպատ՝ պօստով։ 40—100

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԴԻՐԵԿՏՕՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐԸ

հաղորդում է ի գիտութիւն ընդհանուրի, թէ աշակերտների ընդունելութիւնը նախապատրաստական դասարանի ստորին բաժանմունքը եւ նոր բացվող միջին բաժանմունքը նշանակված է այս 1901—1902 ուսումնական տարվայ օգոստոսի 28-ին եւ 31-ին։ Ստորին բաժանմունքը ընդունվում են տղաներ 7-ից մինչեւ 9 տարեկան հասակում առանց քննութեան, միջին բաժանմունքը—8-ից մինչեւ 10 տարեկան՝ քննութեամբ։ Խնդիրներ ընդունվում են երկուշաբթի, չորեքշաբթի եւ շաբաթ օրերը, ցերեկվայ ժամի 11-ից մինչեւ 1-ը, ուսումնարանի ջինութեան մէջ։ Խնդրի հետ միասին պէտք ներկայացնել՝ մետրիկական վկայական [իսկականը, վկայականներ՝ կաչման, ծաղկի պատուաստման մասին կամ նրանց պատճէնները։ Խնդրագիրները առանց վերոյիշեալ դՕկումենտների չեն ընդունվի։

(9, 11, 13, 16, 21) 3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼԷՕ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Հատոր առաջին։—XVI—XVII դար

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՕՊԵԿ

Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.

Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 10—10

ԳՈՒՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

«Զէյթունի ներկայէն եւ անցեալէն». 1 50

«Բանաստեղծը եւ հերոսը» փոխ. Տ. Յովհաննիսեան. . . . . — 25

«Ֆրանս-պրուսական պատերազմը» Տ. Յովհաննիսեան. . . . . — 5

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ Гуттенбергъ. Г. Галустяну. 5—5

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Յովհաննեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. չ.) 4—25

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Іюля 1901 г.

Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.